

դրադիները, միւս կողմէ՝ օդը կը ցնդեցնէին ալն յոյսերը, որ դրուած էին Բիւզանդական կայսրութեան մնացորդներուն վրայ: Իսկ արեւելքէն Պարսկաստան իր թեւերը լայն կը տարածէր, ինչպէս կը տեսնենք Շահ-Իսմայէլի ժամանակները:

Այսպէս, թրքական տիրապետութենէն հազիւ 60-70 տարի առաջ, նոյն այդ թուրքերու մտանդին դիմագրաւելու համար կէս անկախ Սասունը, Տիգրանակերտի քրդական իշխանութեան հետ կը դաշնակցէր եւ երկուքը միասին պատգամաւորներ կը դրկէին մինչեւ Եւրոպա՝ զինական օգնութիւն խնդրելու: Միութեան այդ խոշոր գաղափարը, որ Պոնտոսէն մինչեւ Տիգրանակերտ, Սասուն, Վրաստան ու անկէ Սարրերդ իրարու կը միացնէր բազմաթիւ անկախ ու կէս անկախ իշխանութիւններն ու ժողովուրդները, չչարունակուեցաւ: Այդ գաղափարը սնուցանող ժողովուրդները թոյլ էին, իսկ ուժեղները պետական ըմբռնում չունէին եւ զուրկ էին նման լայն ծրագրի մը հետեւանքները կշռելու կարողութենէն:

Գժարխտարար, հետագայ տարիներու ընթացքին քիւրդերն ու հայերը վերոյիշեալ գեղեղիկ օրինակի կրկնութիւնը չունեցան, ինչպէս պիտի տեսնենք քիչ վարը, օսմանեան տիրապետութեան ժամանակաշրջանը քննութեան առած առեւն:

* * *

Փոքր Ասիոյ մահմետական եւ քրիստոնեայ իշխանապետութիւնները, չկրնալով իրականացնել միութեան գաղափարը, հետզհետէ մտանգուեցան՝ ինչպիսի թրքական եւ պարսկական կայսրութեանց հակամարտութիւններու ճանապարհին վրայ: Թուրքերու (Սիւննի) եւ պարսիկներու (Շիա) կրօնական աղանդական պատերազմներու ջրապտոյտին մէջ շարք մը ցեղեր եւս դալարուեցան, բայց իսկութեան մէջ, թրքական եւ պարսկական ազգային տիրապետութեան եւ պաշտպանման խելայեղ պատերազմ մըն էր սկսուածը, որ դարեր տեւեց:

1514-ին, սուլթան Սէլիմ Ա. պարտութեան մատնելով պարսից Շահ-Իսմայիլը, օսմանեան դրօշի տակ առաւ Քիւրդիստանն ու Հայաստանը: Թուրքերը Քիւրդիստանի մէջ

գտան քիւրդ իշխանապետներ, որոնք իրենց աւատական կարգ ու սարքով խիստ ուժեղ եւ պատերազմիկ տարր մըն էին:

Սուլթան Սէլիմ Ա. կայացուց բարեկամական եւ զինակցական դաշինք մը այդ քիւրդ իշխանապետութեանց հետ: Բիթլիսցի քիւրդ Խորխուր պատրաստած է այդ դաշնագիրը եւ համոզած ցեղապետները ստորագրելու զայն: Յետոյ սուլթան Սէլիմը ինքն ալ ստորագրած եւ վաւերացուցած է դաշնագիրը, որու բովանդակութիւնը հետեւեալն է.

1.— Սոյն դաշնագիրը ստորագրող գոյութիւն ունեցող բոլոր իշխանապետութիւնները պիտի պահպանեն իրենց ամբողջ անկախութիւնը:

2.— Իշխանութիւնը ժառանգականօրէն պիտի անցնի հօրմէն որդուն, կամ պիտի կարգադրուի համաձայն տեղի օրէնքներուն. Սուլթանը կայսերական փերմանով պիտի վաւերացնէ յաջորդողի օրինականութիւնը:

3.— Քիւրդերը պիտի մասնակցին թուրքիոյ կողմէ եղած բոլոր պատերազմներուն:

4.— Թուրքիա պիտի պաշտպանէ բոլոր կան պետութիւնները արտաքին յարձակումներու դէմ:

5.— Քիւրդերը պիտի վնասեն աւանդական կրօնական նուէրները խալիֆայութեան»:

(Այս դաշնագրի կէտերը առնուած են քրդական ազգային մարմնի՝ Հոյ Բունի հրատարակութիւն եղող «The Case of Kurdistan Against Turkey» դրքէն, էջ 27):

Սուլթան Սէլիմի այս գործողութեանց մասին խօսելով՝ Վ. Տօմաշէկ, իր «Սասուն եւ Տիգրիսի աղբերանց սահմանները, պատմական եւ տեղագրական հետազոտութիւն» աշխատութեան մէջ (Թարգ. Հ. Բ. Վ. Պիլէզիկճեանի, Վիեննա, 1896) կուտայ հետեւեալ շահեկան տեղեկութիւնները, որոնք անմիջապէս առնչուելովն ունին մեր քննած նիւթին հետ.—

«Շահ-Իսմայէլի Միջագետաց վրայ ունեցած զերիշխանութիւնը տեղի տուաւ տաճկաց զերիշխանութեան, երբ Չալտէրանի գժարխտ ճակատամարտին մէջ սուլթան Սէլիմ յաղթող եղաւ 1514-ին: Քիւրդ ցեղապետներն՝ որ պարսից Շահին լաւագոյն կարգ մը հաստատելուն եւ աւագակութիւնը բառնալուն դէմ ելած էին